



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԽԶՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մխչյան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մխչյան, (0235) 6-00-48, mkhchyan.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 4

ՄԽԶՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ.-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 2-րդ կետի պահանջներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Մխչյան համայնքի 2017-2021 թթ.-ի զարգացման ծրագիրը համաձայն հավելվածի

Կողմ -8

Դեմ -0

Չեղմպահ -0

1. ԱՅՎԱԶՅԱՆ ՍԵՐՅՈՒԱ

2. ԱՆԴՐԵԱՅԱՆ ՍԱՐԳԻՍ

3. ԳՈՒԼՈՅԱՆ ՀՐԱՅՐ

4. ԴԱՆԻԵՅԱՆ ԱՐԱՅԻԿ

5. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ

6. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏՅՈՄ

7. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԱՐԵՐՏ

8. ՄՐԿՍԻՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵԿԱՎԱՐ

ԽԱԶԻԿ ՊՈՂՈՍՅԱՆ



Հավելված

Հաստատված է համայնքի ավագանու
19.01.2017 թ. թիվ 4 որոշմամբ

Միջյան համայնքի

2017 – 2021 թթ.

զարգացման ծրագիր

Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Միացյալ համայնքի ավագանու հարգարժան անդամներ, սիրելի համայնքի սիրելի բնակիչներ, ձեզ ենք ներկայացնում Միացյալ համայնքի՝ առաջիկա հինգ տարիների զարգացման ծրագիրը:

Մինչև ներկայացնելը, ծրագիրն անցել է քննարկման տարբեր փուլեր՝ ներգրավելով նաև համայնքի՝ տարբեր տարիքի և բնագավառների բնակիչների:

Ծրագրում ներկայացված է համայնքի տեսլականը՝ ինչպիսի համայնք ենք ուզում ունենալ հինգ տարի հետո, և այդ նպատակին հասնելու ուղիները:

Մեր երազած համայնքն ունենալու ճանապարհն անխոչընդոտ ու անարգել չէ, սակայն այդ խոչընդոտները մենք պետք է հաղթահարենք բոլորով՝ միավորելով յուրաքանչյուրիս ջանքն ու եռանդը:

Միացյալ համայնքը, հանդիսանալով տրանսպորտային հանգույց, ունի բարենպաստ տնտեսաաշխարհագրական դիրք, ինչը մեզ հնարավորություն է ընձեռում էլ ավելի արդյունավետ օգտագործելու մեր բարձրորակ մարդկային և նյութական ռեսուրսները:

Սակայն այս և շատ այլ առավելություններով հանդերձ համայնքն ունի մի շարք խնդիրներ, որոնք հետևողական լուծում են պահանջում: Մեր անսահման պահանջմունքներին հակադրվում են համայնքի սահմանափակ ռեսուրսները, ինչը մեզ դնում է ընտրության առջև, թե որ հիմնախնդիրը պետք է համարենք առաջնահերթ:

Այս ծրագրում արտացոլված են առաջնահերթ այն խնդիրները, որոնց լուծումը կհանգեցնի բնակիչների կենսամակարդակի բարձրացմանը և համայնքի հնարավորությունների ընդլայնմանը:

Հարգելի միացյանցիներ, վստահ ենք, որ ունակ ենք առավել բարեկեցիկ ու զարգացած համայնք ունենալու, պարզապես պետք է մեկտեղել այդ ուկյակությունները հանուն զալիք սերնդի վաղվա օրվա: Ժամանակն է, որ դուրս գանք <<ես>>-ի շրջանակներից և ստեղծենք <<մենք>>-ի մշակույթը:

Յուրաքանչյուրիս երազանքն է՝ մեր համայնքը տեսնել առավել զարգացած և հարուստ, առավել բարեկարգ և մաքուր:

Ուրեմն ի գործ:

Միասնականորեն զարգացնենք մեր սիրելի Միացյալը:

Միասին իրականացնենք յուրաքանչյուրիս երազանքը:

Ներածություն

Միսյան համայնքի՝ 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀՀԶԾ) համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթն է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

ՀՀԶԾ-ի կազմման ժամանակ սահմանվել են որոշակի սկզբունքներ, ըստ որոնց ծրագիրը պետք է լինի.

- իրատեսական
- չափելի
- օբյեկտիվ
- մասնակցային
- հրապարակային
- վերահսկելի

ՀՀԶԾ-ի կազմվել է ըստ հետևյալ մեթոդոլոգիաների.

- նկարագրություն
- վիճակագրություն
- վերլուծություն
- պատճառահետևանքային կապ
- եզրակացություն
- գնահատում

ՀՀԶԾ-ն ենթադրում է հետևյալ քայլերի հաջորդականությունը.

- իրավիճակի նկարագրություն
- հեռահար նպատակի՝ տեսլականի սահմանում
- անմիջական նպատակների սահմանում
- միջանկյալ արդյունքների սահմանում
- անհրաժեշտ գործողությունների սահմանում
- ռեսուրսների հաշվարկ

ՀՀԶԾ-ն արտացոլում է Միսյան համայնքի՝ ապագայի հետ կապված իդեերը, և համայնքի բնակիչների կողմից դրանք իրականացնելու ձգտումները:

1. Համայնքի իրավիճակի նկարագրություն

1.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

Միջյան համայնքը մեկ բնակավայր ընդգրկող գյուղական համայնք է Արարատի մարզում, որի վարչական տարածքը 958,58 հա է, բնակչության թիվը՝ 5171:

Համայնքը հիմնադրվել է 1828թ.-ին՝ Խոյից և Սալմաստից վերաբնակեցված ընտանիքների կողմից: Տարբեր ժամանակահատվածներում համայնքի բնակչությունը համալրվել է տարբեր վայրերից եկած բնակիչներով, ովքեր կարճ ժամանակամիջոցում ինտեգրվել են և կառուցել սերտ բարիդրացիական հարաբերություններ:

Համայնքում բնակվում են ազգային փոքրամասնություն համարվող եզդիներ՝ շուրջ 160 հոգի:

Համայնքի բնակչության կազմում տղամարդկանց և կանանց թվերը գրեթե հավասար են՝ տղամարդիկ՝ 2567, կանայք՝ 2502:

Համայնքում մինչև 18 տարեկանների թիվը 1145 է, որը կազմում է բնակչության 22%-ը (գծապատկեր 1):



Գծապատկեր 1

Համայնքում 63 և բարձր տարիք ունեցող անձանց (կենսաթոշակառուներ) թիվը 621 է, որը բնակչության ընդհանուր թվի 12% ն է (գծապատկեր 2):




Գծապատկեր 2

Ներկայումս համայնքում բնակվում են փախստականի կարգավիճակ ունեցող մոտ 10 ընտանիք:

Համայնքում մշտապես աշխատանքներ են տարվում դեմոգրաֆիկ ցուցանիշների բարելավման ուղղությամբ:

Համայնքի բնակիչների զբաղվածության հիմնական ուղղությունը բուսաբուծությունն է, մասնավորապես՝ ծաղկաբուծությունն ու բանջարեղենի մշակությունը: Բնակիչներն իրենց տնտեսությունը վարում են հիմնականում ջերմոցային տնտեսություններում, իսկ գյուղատնտեսական նշանակության հողատարածքները, որոնք կազմում են շուրջ 620 հա, հիմնականում վարելահողեր են, ինչպես նաև խաղողի և պտղատու այգիներ (զձապատկեր 3):



Գձապատկեր 3

Համայնքում պարբերաբար աշխատանքներ են տարվում առավել ինտենսիվ և արդյունավետ գյուղատնտեսություն զարգացնելու ուղղությամբ: ։

1.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը


Տնտեսություն. Ցանկացած ծրագիր իրականացնելու համար անհրաժեշտ են ռեսուրսներ՝ այդ թվում ֆինանսական: Միջյան համայնքը տարեկան բյուջեի ծավալով առաջատարների շարքում է տարածաշրջանում:

Համայնքի տարեկան բյուջեն 2016 թ.-ին կազմել է 154745820.3 դրամ, որից վարչական մասը՝ 118188800 դրամ: Համայնքի սեփական եկամուտները կազմում են վարչական բյուջեի 25%-ը՝ 30126000 դրամ:

2017 թ.-ի համար նախատեսված բյուջեն 1482228934.3 դրամ է, որից վարչական մասը՝ 112034500 դրամ: Սեփական եկամուտները նախատեսված է 30506000 դրամ՝ վարչական բյուջեի 27%-ը(զճապատկեր 4):

2017թ-ի համար նախատեսված է սեփական եկամուտների որոշակի աճ՝ ի հաշիվ տեղական տուրքերի վերաբերյալ օրենսդրական փոփոխության:

Նշենք, որ 2016 թ-ին համայնքին տրվել է պետական այլ դրամաշնորհ(մոտ 6000000 դրամ) նվազագույն աշխատավարձի և էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացման հետևանքով առաջացած բեռը մեղմելու համար, սակայն 2017 թ-ի համար դա նախատեսված չէ, այդ պատճառով նկատելի է զգալի տարբերություն:



Գճապատկեր 4

Արդյունաբերություն. Համայնքի տարածքում գործում են գինու, օղու և կոնյակի արտադրությամբ զբաղվող երկու արդյունաբերական ձեռնարկություններ՝ «Արտաշատ Վինկոն» ՓԲԸ-ն և Ավշարի գործարանի՝ Մխչյանի մասնաճյուղը, որոնք իրենց արտադրանքի մեծ մասը սպառում են տեղական շուկայում, որոշ մասն էլ արտահանում՝ հիմնականում ԱՊՀ երկրներ:

Առևտուր և սպասարկում. Համայնքում գործում են առևտրի և սպասարկման փոքր ու միջին կազմակերպություններ՝ խանութներ (մթերային, շինանյութի և այլն), գեղեցկության սրահներ, ֆոտո ծառայություն և այլն:

Համայնքի տարածքում գործում է երկու սուպերմարկետ (յուրաքանչյուրը 15-20 աշխատատեղով), որոնք բնակիչներին առաջարկում են ապրանքների լայն ընտրանի և քաղաքակիրթ առևտուր անելու հնարավորություն:

Համայնքում իր ծառայություններն է մատուցում «Հայփոստ»-ի վերանորոգված մասնաճյուղը: Համայնքի տարածքում են տեղակայված «Vivacell», «Armentel» և «Ucom» բջջային օպերատորների ալեհավաք կայանները, որոնք բնակիչներին ընձեռում են որակյալ կապից օգտվելու հնարավորություն:

Գյուղատնտեսություն. Մխչյան համայնքում գյուղատնտեսության վարման ավանդական ձևը ջերմոցային տնտեսություններն են: Բնակիչները ջերմոցներում մշակում են հիմնականում ծաղիկներ (մեխակ, հերբերա և այլն) և բանջարեղեն (լոլիկ, վարունգ և այլն): Արտադրանքը գրեթե ամբողջությամբ սպառվում է մայրաքաղաքի մեծածախ շուկաներում: Վերջին ժամանակներս նկատվում է նաև դեպի ԵԱՏՄ երկրներ արտահանման միտում:

Դեռևս խորհրդային ժամանակներից համայնքում մշակվել են, ինչպես նաև հետագայում էլ հիմնվել են պտղատու և խաղողի այգիներ: Պտղատու այգիներում հիմնականում մշակվում է ծիրան, որոշ քանակությամբ էլ նաև դեղձ, տանձ, սալոր և այլն: Արտադրանքը հիմնականում վաճառվում է արտահանող կազմակերպություններին: Խաղողի բերքի մեծ մասը մթերվում է տարածաշրջանի մթերող կազմակերպությունների կողմից: Առկա են նաև «սեղանի խաղողի» որոշ տեսակներ, որոնք պահվում են սառնարանային տնտեսություններում, այնուհետև վաճառվում արտահանող կազմակերպություններին:

Վարելահողերում հիմնականում մշակվում են հացահատիկային մշակաբույսեր (ցորեն, գարի, եգիպտացորեն) և բանջարեղենային կուլտուրաներ (լոլիկ, վարունգ և այլն):

Համայնքում քիչ թվով բնակիչներ զբաղվում են նաև անասնապահությամբ: Հիմնականում պահում են խոշոր եղջերավոր անասուններ: Համայնքում ապրող եզդի բնակիչները ավանդաբար զբաղվում են նաև ոչխարաբուծությամբ:

Մխչյան համայնքը, ի հաշիվ իր բնական, մարդկային և ֆինանսական ռեսուրսների, ունի մեծ ներուժ էլ ավելի բարելավելու առկա տնտեսական ցուցանիշները:

Կրթություն. Համայնքում մեծ ուշադրություն է դարձվում նախադպրոցական կրթությանը: Գործող մանկապարտեզը պատշաճ վերանորոգված է, որտեղ հաճախում է մոտ 110 երեխա, սակայն շենքային պայմանների պատճառով մանկապարտեզն աշխատում է որոշակի ծանրաբեռնվածությամբ, և նոր մասնաշենքի կառուցման անհրաժեշտություն կա:

Համայնքային ենթակայության երաժշտական դպրոցում, որը նույնպես վերանորոգված է, աշխատում է 23 աշխատակից, ովքեր դասավանդում են դպրոց հաճախող 140 աշակերտի: Դպրոցում գործում են ն' պետության կողմից ֆինանսավորվող ազգային նվագարանների խմբակներ, ն' դաշնամուրի, ջութակի ու այլ բաժիններ: Դպրոցի շենքային պայմանները թույլ են տալիս աշակերտների թիվը հասցնել մինչև 160-ի:

Համայնքն աջակցում է նաև համայնքային ենթակայությունից դուրս գտնվող արտադպրոցական ուսուցման այլ խմբակների:

Մխչյան համայնքում գործում է մեկ հանրակրթական դպրոց, որտեղ աշխատում է 52 աշխատակից: Դպրոցում սովորում է 550 աշակերտ, սակայն այն իր շենքային պայմաններով կարող է ապահովել մենչև 800 աշակերտի ուսուցում:

Առողջապահություն. Մխչյան համայնքում գործում է մեկ բուժամբույլատորիա, որը սպասարկում է նաև հարևան Մրգավետ և Հովտաշեն համայնքների բնակիչներին: Տասնամյակներ շարունակ ամբուլատորիան գործում էր դեռևս խորհրդային տարիներին կառուցված շենքում, սակայն 2016թ.-ին շահագործման հանձնվեց պետական ֆինանսավորմամբ և համայնքի համաֆինանսավորմամբ կառուցված նոր շենքը, որն ավելի հարմարավետ է և հնարավորություն է տալիս ապահովել առավել բարձրակարգ սպասարկում: Ամբուլատորիան իր 16 աշխատակիցներով սպասարկում է 7670 բնակչի (Մխչյան համայնքից՝ 4360 բնակչի), սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ հին և նոր շենքերը գտնվում են հարևանությամբ, կարելի է այդ շենքերի միացման և որոշակի աշխատանքներ իրականացնելու արդյունքում սպասարկել էլ ավելի շատ բնակիչներին:


Սոցիալական վիճակ. Համայնքում բնակվող ընտանիքների մեծ մասն ունի միջինից բարձր կենսամակարդակ, սակայն դեռևս կան ընտանիքներ, որոնց եկամուտները չեն բավարարում նվազագույն սպառողական զամբյուղի չափանիշներին:

Սոցիալական աջակցություն տրամադրող տարածքային մարմնում հաշվառված են համայնքի թվով 120 նպաստառու ընտանիքներ:

Համայնքապետարանը մշտապես աշխատանքներ է տանում, համայնքի բնակիչների կենսամակարդակի ցուցանիշների բարելավման և աղքատության մակարդակի նվազեցման ուղղություններով:

1.3. Համայնքի տարածքում նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային ծրագրեր ու միջոցառումներ

Միջյան համայնքում պետական ծրագրով առաջիկա տարիներին նախատեսվում է իրականացնել ոռոգման համակարգի արդիականացում՝ հողային հունով առուների փոխարինում կիսախողովակների: Ծրագրի քննարկումների փուլն ավարտված է և անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության դեպքում նախատեսվում է 2017 թ.-ին իրականացնել այն: Համայնքը պատրաստ է 10-15% համաֆինանսավորմամբ նպաստել ծրագրի իրականացմանը: Նշված ծրագրի շահառուներ կարող են հանդիսանալ ինչպես գյուղատնտեսական նշանակության հողատարածքների, այնպես էլ տնամերձ հողամասերի սեփականատեր՝ թվով 150 ընտանիք, ինչպես նաև համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքները վարձակալող տնտեսվարող սուբյեկտներ: Ծրագրի իրականացման արդյունքում համայնքի՝ մոտ 100 հա հողատարածք (գծապատկեր 5) կունենա կանոնավոր ոռոգում, ինչը կնպաստի հողերի նպատակային օգտագործմանը և վերջին հաշվով բնակիչների եկամուտների ավելացմանն ու կենսամակարդակի բարձրացմանը:



Գծապատկեր 5

1.4. Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման խոչընդոտները

Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացումը խոչընդոտող գործոններն, ըստ համայնքի պարտադիր խնդիրների, հետևյալն են

- գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը

Գյուղատնտեսության ոլորտի տեսանկյունից համայնքի կայուն զարգացմանը խոչընդոտ են հանդիսանում մանր հողակտորները (սեփականաշնորհման ժամանակ մեկ բաժին հողակտորը կազմել է 2800 քմ) և ոռոգման համակարգի ոչ բարվոք վիճակը, ինչը անբարենպաստ պայմաններ է ստեղծում ներդրողների համար:

- համայնքի գույքի կառավարումը

Համայնքը չունի զվսավոր հատակագիծ և դրանից բխող քաղաքաշինական այլ փաստաթղթեր, ինչը խոչընդոտում է համայնքի հեռանկարային ծրագրեր կազմելուն: Նաև դժվարություններ են առայանում համայնքի բնակիչներին՝ քաղաքաշինական փաստաթղթեր տրամադրելու հետ կապված:

Համայնքային նշանակության ճանապարհների մեծ մասը բարեկարգված են, սակայն որոշակի խնդիրներ կան նորաստեղծ թաղամասերում: Անբարեկարգ վիճակում են նաև դաշտամիջյան ճանապարհները:

- նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը

Նախադպրոցական դաստիարակությունը համայնքում իրականացվում է բարձր մակարդակով, սակայն շենքային պայմանների պատճառով համայնքի՝ մոտ 30 երեխա չի կարողանում հաճախել մանկապարտեզ:

Արտադպրոցական դաստիարակությունը (երաժշտական դպրոց) համայնքում իրականացվում է բարձր մակարդակով: Երաժշտական դպրոցի լիարժեք գործունեությանը խոչընդոտ է հանդիսանում երաժշտական գործիքների (դաշնամուր և այլն) հնամաշ լինելը:

- մշակութային կյանքի կազմակերպումը

Համայնքում գործում է վերանորոգված և բարեկարգ մշակույթի տուն, սակայն լիարժեք գործունեություն իրականացնելու համար խոչընդոտ է հանդիսանում բեմի կահավորանքի, լուսային սարքավորումների և վարագույրների բացակայությունը:

- համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը

Համայնքում ապրում է՝ թվով 120 նպաստառու ընտանիք, 17 ընտանիքներ ապրում են տնակային պայմաններում: Նշված ընտանիքներին համայնքապետարանի կողմից ևս պարբերաբար տրամադրվում է սոցիալական աջակցություն:

Համայնքի հանրակրթական դպրոցում իրականացվում է ներառական կրթություն, որում ներկա պահին ընդգրկված է 10 երեխա:

- մարզական կյանքի կազմակերպումը, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը

Համայնքում չկա մարզական դպրոց, այդ պատճառով մարզիկները հիմնականում հաճախում են մարզկենտրոնի և մայրաքաղաքի մարզական դպրոցներ: Պետք է նշել, որ

միջայանցի մարզիկները զբանջում են մեծ հաջողություններ հանրապետական և միջազգային մրցելույթներում, և համայնքում մարզադպրոցի առկայությունը էլ ավելի կյաթաներ ակտիվ մարզական կյանքին:

- **համայնքում բնակարանային շինարարության խթանումը**

Համայնքում բնակելի կառուցապատման հողերի շուկայական գները, համեմատած հարևան համայնքների հետ, անհամեմատ բարձր են, ինչն էլ բնակիչներին դրդում է հողամասեր ձեռք բերել հարևան համայնքներից:

Համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման հողերը աճուրդով օտարելու դեպքում մեկնարկային գինն ըստ կադաստրային արժեքի գրեթե հավասար է շուկայական գնին, ինչն էլ բնակիչներին հետ է մղում ձեռք բերելու նշված հողակտորները: Օրենսդրությամբ համայնքի ավագանուն իրավասություն է տրված նվազեցնելու մեկնարկային գինը, սակայն դա էլ իր հերթին կնվազեցնի համայնքի բյուջեի մուտքերը, այնպես որ պետք է գտնվի որևէ օպտիմալ լուծում:

- **համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը**

Կանաչապատումը և բարեկարգումը դիտվում է համայնքի՝ ամենամյա գործունեություն, և յուրաքանչյուր տարի իրականացվում են աշխատանքներ, սակայն համայնքի գլխավոր ճանապարհի՝ Երևան-Արտաշատ մայրուղու երկայնքով չկա ոռոգման համակարգ, ինչի առկայության դեպքում հնարավոր կլիներ համայնքը դարձնել ավելի գեղեցիկ և բարեկարգ:

Համայնքում մշտապես իրականացվում է աղբահանություն և սանիտարական մաքրում, սակայն առավել բարեկեցիկ համայնք ունենալու ճանապարհին խոչընդոտ է հանդիսանում աղբամանների և սահմանված աղբավայրի բացակայությունը:

Համայնքի հին գերեզմանատունը գտնվում է բնակավայրի ներսում և ցանկապատով առանձնացված չէ բնակավայրից: Այդ ուղղությամբ նախատեսվում է իրականացնել աշխատանքներ:

- **պետության պաշտպանության իրականացման աջակցումը**

Զորակոչերի և զորահավաքների ժամանակ համայնքապետարանը մշտապես աջակցում է զինկոմիսարիատին, անհրաժեշտության դեպքում տրամադրում լրացուցիչ օժանդակություն: Համայնքապետարան-զինկոմիսարիատ համագործակցության ընթացքում առաջանում են որոշակի խնդիրներ կապված մասնավոր սեփականություն հանդիսացող բարձր անցողունակություն ունեցող մեքենաների հետ, որոնք հաշվառված են զինկոմիսարիատում: Նշված մեքենաները հիմնականում հնամաշ են և չեն կարողանում մասնակցել զորավարժություններին:

- **աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը**

Այս ոլորտում խնդիրները բազմաթիվ են: Համայնքի բնակիչների թվի համեմատությամբ փոքր թիվ են կազմում ապաստարանները, ինչպես նաև համայնքը

չունի սեյամիկ ռիսկերի նվազեցման քարտեզ: Որպես խնդիր, կարող ենք նշել նաև բնակիչների իրազեկվածության ցածր մակարդակը:

- **համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը**

Համայնքում պարբերաբար իրականացվող աղբահանության արդյունքում հավաքված աղբը կուտակվում է ժամանակավոր աղբանոցում, ինչը ազդում է շրջակա միջավայրի վրա: Տարածաշրջանում ժամանակակից աղբավայրի առկայությունը խիստ անհրաժեշտություն է, որը կարող է էապես նվազեցնել շրջակա միջավայրի վրա թափոնների ներգործությունը:

Համայնքի արտաքին լուսավորության ցանցում օգտագործվում են նատրիումային լամպեր, որոնք սպառնալիք են շրջակա միջավայրին, և, բացի այդ, ծախսում են առավել շատ էլեկտրաէներգիա, և ցանցը արդիականացնելու անհրաժեշտություն կա:

- **համայնքում ծնելիության և բազմազավակության խթանումը**

Համայնքում մեծ ուշադրություն է դարձվում բազմազավակ ընտանիքներին: Չորս անչափահաս երեխա ունեցող մեկ ընտանիքի համայնքի ավագանու կողմից անհատույց տրվել է տնամերձ հողամաս, սակայն ՀՀ օրենսդրությունում կան որոշակի բացեր (Հողային օրենսգիրք), որոնք սահմանափակում են նմանատիպ ծրագրերը, և անհրաժեշտություն կա վերանայելու դրանք:

- **համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպում**

Չնայած արդի ժամանակաշրջանում սոցցանցերի առկայությանը, երիտասարդները համայնքում համապատասխան պայմանների բացակայության պատճառով զրկված են առերես շփվելու հնարավորությունից:

- **համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը**

Համայնքում լիարժեք գործում է ամբուլատորիա, սակայն բնակիչների համար դեռևս խնդիր է դեղամիջոցների բարձր գինը և պետպատվերի նեղ շրջանակը:

Ամփոփելով, կարող ենք պնդել, որ չնայած բազմաթիվ խոչընդոտներին, համայնքն իր մեծ ներուժով ի գործ է հաղթահարել իր առջև ծառայած խնդիրները և հասնել ցանկալի արդյունքի:

1.5 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների՝ ՈւժՇՍ (SWOT) վերլուծություն

Ուժեղ կողմեր

- Համայնքը գտնվում է բարենպաստ տնտեսաաշխարհագրական դիրքում՝ գտնվելով մայրաքաղաք Երևանից 15 կմ և մարզկենտրոն Արտաշատից 10 կմ հեռավորության վրա:
- Համայնքի տարածքով են անցնում Երևան-Մեղրի միջպետական նշանակության ավտոմայրուղին, Երևան-Արտաշատ հանրապետական նշանակության ավտոմայրուղին, Մխչյան-Արևշատ և Մխչյան-Դիտակ միջհամայնքային ճանապարհները, ինչպես նաև Երևան-Երասխ երկաթգիծը:
- Բերրի հողերն ու կլիմայական բարենպաստ պայմանները լուրջ նախադրյալներ են գյուղատնտեսության ինտենսիվ զարգացման համար:
- Համայնքի տարածքով է անցնում Արտաշատի ջրանցքը:
- Համայնքի մարդկային ռեսուրսները լուրջ պոտենցիալ են համայնքի զարգացման համար: Համայնքի բնակիչներն աչքի են ընկնում իրենց աշխատասիրությամբ, կամային հատկություններով և կրթական մակարդակով:

Թույլ կողմեր

- Համայնքն ունի անբարեկարգ ոռոգման համակարգ
- Ոռոգումն իրականացվում է հիմնականում մեխանիկական եղանակով, ինչը բարձրացնում է ոռոգման ջրի սակագինը
- Անբարեկարգ վիճակում են դաշտային ճանապարհները
- Համայնքում չկա կոյուղի

Հնարավորություններ

- Պետական և դոնոր կազմակերպությունների աջակցությամբ ծրագրերի իրականացումը
- Մասնավոր ներդրումներ

Վտանգներ

- Բնական աղետներ /կարկուտ, ցրտահարություն և այլն/
- Մակրոտնտեսական անկայունություն

2. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

2.1 Համայնքի զարգացման տեսլական

Միսյան համայնքը տասնամյակներ շարունակ այքի է ընկել զարգացվածությամբ և բնակիչների բարձր կենսամակարդակով, սակայն 90-ականների տնտեսական հետընթացը համայնքի վրա ևս իր խոր հետքը թողեց: Միայն վերջին տարիների տնտեսական աշխուժությունը որոշակի դրական ազդեցություն սկսեց թողնել համայնքի բնակիչների վրա, սակայն խնդիրներ դեռևս շատ կան, որոնք պահանջում են համալիր և արդյունավետ լուծումներ:

Համառոտ ներկայացնենք համայնքի կայուն զարգացման ակնկալվող ցուցանիշներն ըստ թիրախների.

▶ Ներկայումս աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը կազմում է համայնքի ընտանիքների թվի մոտ 10%-ը՝ 120 ընտանիք: ՀԶԾ գլխավոր նպատակներից մեկը պետք է լինի այդ ընտանիքների թվի կրճատումը՝ յուրաքանչյուր տարի 15-20%-ով:

▶ Բնակիչների կենսամակարդակի բարձրացումը հնարավորություն կտա նրանց կառուցել նոր տներ և ձեռք բերել նոր փոխադրամիջոցներ, ինչն էլ իր հերթին, ի հաշիվ գույքահարկի, կավելացնի համայնքի բյուջեի եկամուտները՝ յուրաքանչյուր տարի գրեթե 5-10%-ով:

▶ Համայնքը մշտապես այքի է ընկել իր գրավչությամբ: Տարբեր տարիներին այստեղ իրականացվել են վերաբնակեցման ծրագրեր, և ակնկալվում է, որ համայնքի զարգացումը կգրավի շահագրգիռ ընտանիքներին, որոնք կձգտեն մշտական բնակություն հաստատել Միսյան համայնքում՝ ավելացնելով համայնքի բնակչության թիվը տարեկան մինչև 5%-ով:

Առաջիկա տարիներին Միսյան համայնքը, իր առջև ծառայած խնդիրները լուծելու արդյունքում, պետք է դառնա էլ ավելի զարգացած և բարեկեցիկ համայնք, որի բնակիչների կենսամակարդակի միջին ցուցանիշը պետք է բարձր լինի հանրապետական միջին ցուցանիշից, իսկ աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը պետք է հավասարվի նվազագույնի:

Համայնքի տեսլականն է.

- բարձրացնել համայնքի բնակիչների կենսամակարդակը
- համայնքը դարձնել էլ ավելի բարեկարգ և գեղեցիկ
- ապահովել համայնքի ներդրումային գրավչություն

2.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակները

Ցանկացած հեռահար ռազմավարություն իր մեջ ներառում է անմիջական նպատակներ, որոնց իրականացման արդյունքում է, որ իրագործվում է ռազմավարական պլանը:

Անմիջական նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է գրանցել միջանկյալ արդյունքներ, որոնք ենթադրում են հստակ գործողություններ:

Նպատակները պետք է լինեն իրատեսական և չափելի, իսկ միջանկյալ արդյունքներ ապահովող գործողությունները՝ ռեսուրսներով հիմնավորված:

Նպատակների չափելիությունը պետք է արտահայտված լինի ինչպես քանակական, այնպես էլ որակական ցուցանիշներով:

Միջանկյալ արդյունքներ ապահովող գործողությունները կարող են ներառել ինչպես ֆինանսական, այնպես էլ մարդկային, կյութական և այլ ռեսուրսներ:

Համայնքի տեսլականն իրագործելուն ուղղված անմիջական նպատակները ենթադրում են համայնքի առջև ծառայած պարտադիր խնդիրների համալիր և իրագործելի լուծումներ:

Ներկայացնենք համայնքի անմիջական նպատակներն ըստ պարտադիր խնդիրների.

❖ գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը

1. Պետական ծրագրի շրջանակներում նախատեսվող համայնքի ոռոգման համակարգի արդիականացման ծրագրին, որը կնպաստի գյուղատնտեսության զարգացմանը, համայնքը պատրաստ է կատարել մինչև 10% համաֆինանսավորում: Ծրագրի շահառուներն են ինչպես գյուղատնտեսական նշանակության հողատարածքների, այնպես էլ տնամերձ հողամասերի սեփականատերերը, ինչպես նաև համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքները վարձակալող տնտեսավարող սուբյեկտներ: *Մանրամասն՝ Հավելված 1՝ Ծրագրի անձնագիր-1*

Ծրագրի նպատակն է համայնքի՝ մոտ 100 հա հողատարածք ապահովել կանոնավոր ոռոգումամբ, ինչը կնպաստի հողերի նպատակային օգտագործմանը և վերջին հաշվով բնակիչների կենսամակարդակի բարձրացմանը: Ծրագրի նպատակն է նաև ջրային ռեսուրսների խնայողությունը:

2. Համայնքի տարածքում տնտեսական գործունեություն իրականացնող ձեռնարկատերերին, որոնց ներդրումային ծրագրով նախատեսվում է 10 և ավելի աշխատատեղերի ստեղծում, համայնքը պատրաստ է սահմանել հարկային

արտոնություններ: Պարտադիր պայման պետք է հանդիսանա աշխատատեղերում համայնքի բնակիչների ընդգրկումը: Ճիշտ է, այդպիսի ծրագիրը կնվազեցնի համայնքի բյուջեի եկամուտները, սակայն ծրագրի նպատակն է աշխատատեղերի ստեղծման արդյունքում ավելացնել համայնքի բնակիչների եկամուտները, ինչն էլ միջնաժամկետում մուլտիպլիկատորի էֆեկտով կհանգեցնի ընդհանուր կենսամակարդակի բարձրացման: *Մանրամասն՝ Հավելված 1՝ Ծրագրի անձնագիր-2*
Ծրագրի նպատակն է համայնքում նոր աշխատատեղերի ստեղծումը

❖ համայնքի գույքի կառավարումը

1. Համայնքի գլխավոր հատակագծի և դրանից բխող քաղաքաշինական այլ փաստաթղթերի բացակայությունը բացասաբար է անդրադառնում համայնքային գույքի կառավարմանը: Այդ պատճառով նախատեսվում է առաջիկայում սկսել գլխավոր հատակագծի կազմման գործընթաց: Ծրագրի իրականացման արդյունքում առավել դյուրին կդառնա համայնքի բնակիչների՝ քաղաքաշինական փաստաթղթերի հետ կապված վարչարարությունը: *Մանրամասն՝ Հավելված 1՝ Ծրագրի անձնագիր-3*

Ծրագրի նպատակն է առավել արդյունավետ կառավարել համայնքային գույքը, ինչպես նաև բնակիչներին մատուցել մատչելի ծառայություններ:

2. Միայն համայնքի սեփական միջոցներով ամեն տարի իրականացվում են համայնքային նշանակության ճանապարհների բարեկարգման՝ հարթեցման և խճապատման աշխատանքներ: Տարեկան մոտ կես կիլոմետր ճանապարհ է բարեկարգվում: Նախատեսվում է, որ առաջիկա տարիներին ևս տարեկան նույն չափով կիրականացվեն նմանատիպ աշխատանքներ: *Մանրամասն՝ Հավելված 1՝ Ծրագրի անձնագիր-4*

Ծրագրի նպատակն է համայնքը դարձնել առավել բարեկարգ:

❖ նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը

1. Համայնքում գործում է պատշաճ վերանորոգված և բարձրակարգ սպասարկում իրականացնող մանկապարտեզ: Սակայն շենքային պայմանների սուղ լինելը թույլ չի տալիս, որ համապատասխան տարիքի բոլոր երեխաները հաճախեն մանկապարտեզ, այդ պատճառով նոր մասնաշենքի կառուցման անհրաժեշտություն է զգացվում: Պետական ծրագրի առկայության դեպքում համայնքը պատրաստ է հանդես գալ համաֆինանսավորմամբ՝ մինչև 10%-ի չափով: *Մանրամասն՝ Հավելված 1՝ Ծրագրի անձնագիր - 5*

Ծրագրի նպատակն է համայնքի՝ համապատասխան տարիքի բոլոր երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական կրթությանը: Ծրագիրը նաև երեխաների ծնողներին հնարավորություն կտա աշխատանքին ժամանակ տրամադրել:

❖ մշակութային կյանքի կազմակերպումը

Միայն համայնքի գեղեցիկ վերանորոգված մշակույթի տունը առավել արդյունավետ օգտագործելու նպատակով առաջիկա տարիներին նախատեսվում է դահլիճն ապահովել վարագույրներով, իսկ բեմը՝ համապատասխան կահավորանքներով և լուսային սարքավորումներով: *Մանրամասն՝ Հավելված 1՝ Ծրագրի անձնագիր - 6*

Ծրագիրը նպատակ է հետապնդում ակտիվացնել համայնքում մշակութային կյանքը, ինչպես նաև դահլիճը վարձակալությամբ տրամադրելու միջոցով համայնքին ապահովել հավելյալ եկամուտ:

❖ համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը

Համայնքի բյուջեից սոցիալապես անապահով բնակիչներին ամեն տարի նախատեսվում է սոցիալական աջակցություն: Առաջիկա տարիներին նշված ծրագիրը կրելու է շարունակական բնույթ: *Մանրամասն՝ Հավելված 1՝ Ծրագրի անձնագիր - 7*

Ծրագրի նպատակն է թեթևացնել խոցելի խմբերի սոցիալական բեռը:

❖ մարզական կյանքի կազմակերպումը, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը

Համայնքում մարզադպրոցի առկայությունը էլ ավելի կխթաներ առողջ ապրելակերպը և ֆիզիկական կուլտուրայի տարածումը: Նշենք, որ համայնքի մարզիկները մեծ հաջողություններ են գրանցում հանրապետական և միջազգային մրցելույթներում: Համապատասխան ծրագրի առկայության դեպքում համայնքը պատրաստ է տրամադրել հողատարածք և այլ ռեսուրսներ: *Մանրամասն՝ Հավելված 1՝ Ծրագրի անձնագիր-8*

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքում մասսայական տարածում կստանա ֆիզիկական կուլտուրան և կխրախուսվի առողջ ապրելակերպը:

❖ համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովումը, ինչպես նաև համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը

1. Համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների կանաչապատման ծրագրերը պարբերեբար բնույթ են կրում: Համայնքի կենտրոնական հատվածում առկա է մոտ 1000 քմ համայնքային հողատարածք, որտեղ առաջիկա տարիներին նախատեսվում է հիմնել գրոսայգի: Նմանատիպ ծրագրեր են նախատեսվում նաև համայնքի այլ հատվածներում: *Մանրամասն՝ Հավելված 1՝ Ծրագրի անձնագիր - 9*

Ծրագրի նպատակն է ապահովել համայնքի բնակիչների՝ հանգստից օգտվելու հնարավորությունը:

2. Աղբահանությունը համայնքում կրում է ամենօրյա բնույթ, սակայն կատարվող աշխատանքները դեռևս բավարար չեն: Նախատեսվում է ձեռք բերել աղբամաններ, ինչպես նաև վարչարարության արդյունքում առավել արդյունավետ դարձնել աղբահանության գրաֆիկը: *Մանրամասն՝ Հավելված 1՝ Ծրագրի անձնագիր-10*

Ծրագրի նպատակն է՝ բնակիչներին բարձրակարգ ծառայությունների մատուցումը և շրջակա միջավայրի պահպանությունը:

3. 2017 թ-ին նախատեսված է համայնքի համայնքի հին գերեզմանատան ցանկապատման աշխատանքներ իրականացնել: Ծրագրի նախագածանախահաշվային փուլն արդեն ավարտված է: *Մանրամասն՝ Հավելված 1՝ Ծրագրի անձնագիր - 11*

